ընտանիքներ կը բնակէին): Անոնք ունէին նաեւ այլ կալուածներ, ազարակներ ու արօտավայրեր:

Փրունգուլեան գերդաստանէն Անտոն կառավարութեան կապալով ձեռք ձգեց Սուշաւայէն քիչ մը հեռու, դէպի արեւմուտք, Զամբա վանքին դիմաց, ընդարձակ ձորի մը մէջ գտնուող Եկէյա մեծ եւ բարեբեր գիւղը, ուր քանի մը հայ ընտանիքներ կը բնակէին: Եկէյա բաւական ժամանակ Անտոն ֆոն Փրունգուլի ընտանիքին ձեռքը մնաց, բայց հետագային Արթիտովիչները գնեցին ամբողջ գիւղը:

Փրունգուլեաններ իրենց սեփականութիւնը կազմող գիւղերու եւ ազարակներու բնակիչներուն կու տալին սերմնացու եւ լծկան եզներ, որպէսզի մշակեն հողը, վարեն, ցանեն, հնձեն ու կամենն. յետոյ անոնք բերքին մեծ մասը Փրունգուլեաններուն կու տալին: Անոնք նաեւ իրենց տէրերուն անասունները կ'արածէին: Ընդհանուր առմամբ ձեռքէն եւ ուսմէն այդ գիւղացիները թշուառ պայմաններու տակ կ'ապրէին եւ գրեթէ բոլորն ալ անգրագէտ էին:

Աւստրիական կառավարութեան թոյլտուութեան օգտուելով՝ Փրունգուլեաններ մեծ աշխատանք սկսան տանիլ իրենց սեփականութիւնը կազմող գիւղերուն մէջ հայ գաղթական ընտանիքներ բերելու ու բնակեցնելու համար: Հայ քաղաքական քանի մը գործիչներ համաձայն էին Օսմանեան կայսրութեան սահմաններէն հայ գաղթականներ բերելու եւ Պուլտիւնայի մէջ վերանաբնակեցնելու այս ծրագրին եւ կառավարութեան զօրակցութիւնն ալ ապահոված էին, որ սակայն չիրականացաւ (նշենք, որ այս ուղղութեամբ աւստրիական կառավարութիւնը գաղտնի պատուիրակ ալ ուղարկած էր Պոլիս՝ հայերու գաղթը կազմակերպելու, բայց օսմանեան կառավարութեան բողոքին վրայ հաժարած էր):

Սուշաւայի բարգաւաճման պայմաններուն տակ տարբեր վայրերէ եւ յատկապէս Թրանսիլվանիայէն հայեր գացին եւ հոն բնակութիւն հաստատեցին. այսպէս, 1778ին հոն վախճան փայտաչէն բնակարաններ կառուցուեցան եւ հայութեան թիւը հասաւ 118 ընտանիքի, 1802ին գաղութին թիւը հասաւ 205 ընտանիքի՝ 965 հոգիով, 1820ին՝ 200 ընտանիքի, 1825ին՝ 250 ընտանիքի, 1857ին՝ 530 ընտանիքի եւ յետոյ իջաւ 300 ընտանիքի՝ 1200 հոգիով:



Յարութիւն, Ղուկաս եւ Խաչերես եղբայրներու կողքին, ԺՁ. դարուն սկիզբը հեղինակաւոր դէմք դարձաւ Վարդերես ֆոն Փրունգուլ, որ իր կարգին աւստրիական ազնուականի կոչում ստացաւ: Ան ընդարձակ կալուածներ ձեռք ձգեց եւ մեծ հողատէր դարձաւ տարբարութիւններու մէջ նա յիշուած է իրրեւ «յաւիտենական գեղով իշխան»:

Լէոփոլտ Բ. յաջորդին՝ Ֆրանց Բ. կայսր օրով (1792-1835) Նափոլէոնի ֆրանսական բանակը ներխուժեց Աւստրիա, որ ծանր պարտութիւն կրեց եւ զրկուեցաւ իր տիրապետած շատ մը երկիրներէն, ինչպէս նաեւ հրաժարեցաւ Գերմանիոյ վրայ ունեցած ազդեցութեանէն. 1806ին ջնջուեցաւ Հռոմէական Սրբազան կայսրութիւնը: Նափոլէոնի պարտութեանէն ետք, Վիեննայի ընկերներ (1814-1815) որոշումով Աւստրիա վերատիրացաւ իր կորսնցուցած հողերուն: Հապսպուրկներու արքունիքը վերահաստատեց Փրունգուլեաններուն իրաւունքները, որոնք Գարրի ընտանիքի կողքին, կը մնային կայսրութեան արեւելեան ծայրամասին՝ Պուլտիւնայի գլխաւոր ազնուական տունները:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Լիքանանի ֆուտպոլի ֆետերասիոնը շաբաթակազմին իր գումարած ժողովին հրապարակեց Ա. Բ. դասակարգերուն դարձի մրցումներուն ամբողջական յայտագիրը, որոնք կը սկսին այս շաբաթվանից:

Բ. Ս. Ը. Ս. ի ֆուտպոլի մերկայացուցչական խումբը, դարձի իր առաջին մրցումը պիտի կատարէ Խիարայի մէջ, ուր ժամաւ Ապտուլ Նասր դաշտին վրայ Կիրակի, 9 Փետրուարին հիւրը պիտի ըլլայ Հորիէ Մաժտալ Այնճարի:

Դարձի իր 11 մրցումներուն, Բ. Ս. Ը. Ս. իր հինգ մրցումը պիտի կատարէ Պուրճ Համուտի Զաղաքապետարանի դաշտին վրայ, երկուքը՝ Թրիփոլի մէջ, մէկը՝ Պէյրուտի Զաղաքապետարանի դաշտին վրայ, իսկ մէկը՝ ժուճիէի Զաղաքապետարանի դաշտին վրայ: Ստորեւ՝ դարձի մրցումներուն ամբողջական յայտագիրը.

ԹՈՒՄ	ՄՐՑՈՒՄ	ԱՐԴԻՒՆԸ	ԺԱՄ	ԴԱՇՏ	
● 14ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 7 Փետրուար Շաբաթ, 8 Փետրուար Կիրակի, 9 Փետրուար Կիրակի, 9 Փետրուար Կիրակի, 9 Փետրուար Կիրակի, 9 Փետրուար	Իժթիմահի - Շապապ Թրիփոլի Նահտա - Ռասիճկ Հորիէ - Բ. Ս. Ը. Ս. Ահլի Սայտա - Բ. Ս. Ը. Ս. Իսլահ - Մահապպա Թ. Նապաթիէ - Ռ. Ուալ Ատապ	---	2:30ից 2:30ից 2:30ից 2:30ից 2:30ից 2:30ից	Թրիփոլի Պ. Համուտ Խիարա Սուր Իսլահ Նապաթիէ
● 15ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 14 Փետրուար Շաբաթ, 15 Փետրուար Կիրակի, 16 Փետրուար Կիրակի, 16 Փետրուար Կիրակի, 16 Փետրուար Կիրակի, 16 Փետրուար	Իժթիմահի - Ռ. Ուալ Ատապ Բ. Ս. Ը. Ս. - Մահապպա Բ. Ս. Ը. Ս. - Ահլի Սայտա Նահտա - Իսլահ Թատ. Նապաթիէ - Ռասիճկ Շապ. Թրիփոլի - Հորիէ	---	2:30ից 2:30ից 2:30ից 2:30ից 2:30ից 2:30ից	Թրիփոլի Պ. Համուտ Պ. Համուտ Խիարա Նապաթիէ Թրիփոլի
● 16ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 21 Փետրուար Շաբաթ, 22 Փետրուար Կիրակի, 23 Փետրուար Կիրակի, 23 Փետրուար Կիրակի, 23 Փետրուար Կիրակի, 23 Փետրուար	Իսլահ - Թատ. Նապաթիէ Իժթիմահի - Ռասիճկ Մահապպա - Բ. Ս. Ը. Ս. Բ. Ս. Ը. Ս. - Նահտա Հորիէ - Ռիատա Ուալ Ատապ Ահլի Սայտա - Շապ. Թրիփոլի	---	2:45ից 2:45ից 2:45ից 2:45ից 2:45ից 2:45ից	Իսլահ Թրիփոլի Թրիփոլի Պ. Համուտ Խիարա Սուր
● 17ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Շաբաթ, 1 Մարտ Շաբաթ, 1 Մարտ Շաբաթ, 1 Մարտ Կիրակի, 2 Մարտ Կիրակի, 2 Մարտ Կիրակի, 2 Մարտ	Հորիէ - Ռասիճկ Ահլի Սայտա - Ռի. Ուալ Ատապ Մահապպա - Շապ. Թրիփոլի Նահտա - Բ. Ս. Ը. Ս. Բ. Ս. Ը. Ս. - Թատ. Նապաթիէ Իսլահ - Իժթիմահի	---	2:45ից 2:45ից 2:45ից 2:45ից 2:45ից 2:45ից	Խիարա Սուր Թրիփոլի Խիարա Պ. Համուտ Իսլահ
● 18ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 7 Մարտ Շաբաթ, 8 Մարտ Շաբաթ, 8 Մարտ Կիրակի, 9 Մարտ Կիրակի, 9 Մարտ Կիրակի, 9 Մարտ	Ռասիճկ - Ահլի Սայտա Մահապպա - Ռ. Ուալ Ատապ Բ. Ս. Ը. Ս. - Իժթիմահի Բ. Ս. Ը. Ս. - Թատ. Նապաթիէ Իսլահ - Հորիէ Նահտա - Շապ. Թրիփոլի	---	3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից	Պ. Համուտ Թրիփոլի Պ. Համուտ Պ. Համուտ Իսլահ Խիարա
● 19ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Շաբաթ, 15 Մարտ Շաբաթ, 15 Մարտ Կիրակի, 16 Մարտ Կիրակի, 16 Մարտ Կիրակի, 16 Մարտ Կիրակի, 16 Մարտ	Ահլի Սայտա - Իսլահ Ռիատա Ուալ Ատապ - Նահտա Բ. Ս. Ը. Ս. - Իժթիմահի Հորիէ - Բ. Ս. Ը. Ս. Ռասիճկ - Մահապպա Շապ. Թրիփոլի - Թ. Նապաթիէ	---	3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից	Սուր Թրիփոլի Պ. Համուտ Խիարա Ժուճիէ Թրիփոլի
● 20ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 21 Մարտ Շաբաթ, 22 Մարտ Շաբաթ, 22 Մարտ Կիրակի, 23 Մարտ Կիրակի, 23 Մարտ Կիրակի, 23 Մարտ	Մահապպա - Իժթիմահի Ռիատա Ուալ Ատապ - Բ. Ս. Ը. Ս. Ռասիճկ - Իսլահ Շապ. Թրիփոլի - Բ. Ս. Ը. Ս. Ահլի Սայտա - Թ. Նապաթիէ Հորիէ - Նահտա	---	3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից 3:00ից	Թրիփոլի Թրիփոլի Պ. Համուտ Ժուճիէ Սուր Խիարա
● 21ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 28 Մարտ Նորքաթ, 28 Մարտ Շաբաթ, 29 Մարտ Կիրակի, 30 Մարտ Կիրակի, 30 Մարտ Կիրակի, 30 Մարտ	Իսլահ - Շապ. Թրիփոլի Իժթիմահի - Ահլի Սայտա Ռ. Ուալ Ատապ - Բ. Ս. Ը. Ս. Ռասիճկ - Բ. Ս. Ը. Ս. Թատ. Նապաթիէ - Հորիէ Մահապպա - Նահտա	---	3:00ից 3:00ից 3:00ից 4:00ից 4:00ից 4:00ից	Իսլահ Թրիփոլի Թրիփոլի Ժուճիէ Նապաթիէ Թրիփոլի
● 22ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 4 Ապրիլ Կիրակի, 6 Ապրիլ Կիրակի, 6 Ապրիլ Կիրակի, 6 Ապրիլ Կիրակի, 6 Ապրիլ Կիրակի, 6 Ապրիլ	Շ. Թրիփոլի - Ռ. Ուալ Ատապ Ռասիճկ - Բ. Ս. Ը. Ս. Իսլահ - Բ. Ս. Ը. Ս. Իժթիմահի - Հորիէ Նահտա - Թատ. Նապաթիէ Ահլի Սայտա - Մահապպա	---	4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից	Թրիփոլի Պ. Համուտ Իսլահ Թրիփոլի Խիարա Սուր
● 23ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 11 Ապրիլ Շաբաթ, 12 Ապրիլ Շաբաթ, 12 Ապրիլ Կիրակի, 13 Ապրիլ Կիրակի, 13 Ապրիլ Կիրակի, 13 Ապրիլ	Ռիատա Ուալ Ատապ - Ռասիճկ Իժթիմահի - Թատ. Նապաթիէ Ահլի Սայտա - Նահտա Բ. Ս. Ը. Ս. - Իսլահ Շապ. Թրիփոլի - Բ. Ս. Ը. Ս. Հորիէ - Մահապպա	---	4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից	Թրիփոլի Թրիփոլի Սուր Պ. Համուտ Թրիփոլի Խիարա
● 24ԲԳ ՀԱՆԳՐՈՒՄ ԹՈՒՄ	Նորքաթ, 17 Ապրիլ Նորքաթ, 18 Ապրիլ Շաբաթ, 19 Ապրիլ Կիրակի, 20 Ապրիլ Կիրակի, 20 Ապրիլ Կիրակի, 20 Ապրիլ	Շապ. Թրիփոլի - Ռասիճկ Ռիատա Ուալ Ատապ - Իսլահ Իժթիմահի - Նահտա Բ. Ս. Ը. Ս. - Բ. Ս. Ը. Ս. Մահապպա - Թատ. Նապաթիէ Հորիէ - Ահլի Սայտա	---	4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից 4:00ից	Թրիփոլի Թրիփոլի Թրիփոլի Պէյրուտ Թրիփոլի Խիարա

### ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լիքանանի ֆուտպոլի ֆետերասիոնը, շաբաթակազմին իր գումարած ժողովին, վաւերացնելէ ետք անցեալ շաբաթակազմին տեղի ունեցած Լիքանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարին 1-32րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, տուաւ հետեւեալ որոշումները.

- 1- Ֆետերասիոնը ներում չնորհեց այն մարզիկներուն եւ պատասխանատուներուն, որոնք 22 Սեպտեմբեր 2002էն առաջ տարբեր տեսակի պատճառներով կախակաշուած էին:
- 2- Իրաւարարներ՝ Թալէպ Ռամատան եւ Սուլթան Թալէպ Երկուքան համար կախակաշուեցան՝ իրենց կատարած սխալներուն պատճառով: Անոնց կախակաշուածը կը սկսի 25 Յունւար 2003էն սկսեալ:

3.- Սալամի մարզիկներէն՝ Ժատ Սուաուա մէկ ամիսով կը կախակաշուի, մրցակից կազմին համակիրներուն հանդէպ իր ցուցաբերած ոչ մարզական կեցուածքին համար:

4.- Ա. դասակարգի ախոյեանութեան դարձի առաջին հանգրուանի մրցումները, որոնք տեղի կ'ունենան այս շաբաթակազմին պիտի կատարուին հետեւեալ յայտագիրին հիմամբ.  
ՇԱԲԱԹ, 8 ՓԵՏՐՈՒՄ ԺԱՄ ԴԱՇՏ Արա Ալէյ - Ախտ 2:30ից Մ. Աւան Անասր - Սաֆն 4:45ից Պէյրուտ  
ԿԻՐԱԿԻ, 9 ՓԵՏՐՈՒՄ Սաժէս - Պըրճ 2:30ից Ժուճիէ Մապարա - Օլիմպիք 2:30ից Պ. Հ. Նըժմէ - Սալամ 2:30ից Մ. Աւան Շ. Սահէլ - Թ. Սուր 4:45ից Պէյրուտ

էն. Պի. էջ.

### ՆԻԻ ՕՐԼԻՆԶ - ՊՈՍԹԸՆ ՍԵԼԹԻՔՍ 103-96

էն. Պի. էջի երէկուան մրցումներուն, Ատլանտեան հոտիի (Արեւելեան շրջան) երկրորդ դիրքը գրաւող Պոսթըն Սելթիքս կրեց եղանակի իր 22րդ պարտութիւնը, երբ Նիւ Օրլինզի դաշտին վրայ կրեց 103-96 արդիւնքով պարտութիւն մը:

Տալաս Մալլորիքս - Եուրթա ձեյ 92-90  
Ֆետիք Սանյ - Շիքալօ Պուլ 115-111  
Կուլտըն Սթէյթ Ուորիքս - Մեմֆիս Կրիպլի 101-91

Մէճիք Լու Անճելլու Լէյքըր - Ինտիանա Փէյքըր  
Լու Անճելլու Քլիփըր - Նիւ Եորք Նիքս  
Թորոնթօ Ռեյնօրթ - Միլուոքի Պաքս  
Հիւսթըն Ռոքէթս - Միլուոքս Վուլվ  
Սաքրամենթօ Քլիփըր - Տալաս Մալլորիքս  
Շիքալօ Պուլ - Տեննիսի Նալթթ

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.  
Քլիվլենտ Բաւալիք - Ուաշինկթըն Ուիլքոքս - Թրէյլ Պլէյքըր - Օրլանտօ

### ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ...

Շարունակուած Ա. էջէն  
դժուար տարիները եւ յառաջիկայի արձանագրուած է տնտեսական մարզէն ներս:

Մեղրի բնակչութեան հետ հանդիպման ընթացքին նախագահ Քոչարեան յայտնեց, որ հակառակ անոր որ շրջանը տնտեսական զարգացում ունեցած է յատկապէս հանքային արդիւնաբերութեան մարզին, այսօրուանը անոնք, որոնք կը շահարկեն Մեղրի փոխանակման հարցը, անմիջականօրէն մեծ հարուած կը հասցնեն այս շրջանին մէջ նոր ներդրումներու կատարման: Խօսք առաւ նաեւ Զ. Գ. Գեորգիան Մարմինի անդամ Գագիկ Գեորգեան, որ դիտել տուաւ, որ Մեղրիի Գագիկ Գեորգեանի փոխանակման շահարկումը մեծ վնաս հասցուցած է ոչ միայն Մեղրի բնակչներուն բարոյագրութեան վիճակին, այլ նաեւ շրջանի տնտեսական բարգաւաճման:

Կապանի մէջ կայացած հանդիպումին ընթացքին նախագահ Քոչարեան, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին բանակցութիւններուն Ղարաբաղի մասնակցութեան նշեց. «Մինչեւ զարաբաղեան կողմին բանակցութիւններուն մասնակցելը, Հայաստանի կողմէ առաջարկուող բանաձեւը հետեւեալն է՝ Հայաստան կը համաձայնի այն բոլոր որոշումներուն, որոնց համաձայն կ'ըլլան Լեռնային Ղարաբաղը եւ Ազրպէյճանը»:

### ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸԱՅ ՄԻՋԱԴԱՐԵԱՆ ...

Շարունակուած 3րդ էջէն  
յատուկ կերպով անդրադարձաւ մասնաւորաբար Պետրոս Գետադարձ եւ Ներսէս Շնորհալի կաթողիկոսներուն ժամանակաշրջաններուն այն շարականագիրներուն, որոնք հայ հոգեւոր երաժշտութիւնը պարզացուցին իրենց ստեղծագործութիւններով:  
Դասախօսութենէն ետք Աննա Արեւշատեան պատասխանեց ներկայերու հարցումներուն: Իր տեսակին մէջ եկակի դասախօսութեան մատուցման ընթացքին ի յայտ եկաւ Աննա Արեւշատեան երաժշտագէտը, գիտնականը եւ ներհին մտաւորականը:

**ԳՐԱԴՈՒՄ**  
**ՕՐ**  
**Շ. Յ. Դ. ԱԱՐԴԱՐԱՊՈՍ ԿՈՍԻՏԷ 3 ՄԱՅԻՄ 2003**

**ԳՐԱԴՈՒՄ**  
**ՕՐ**  
**ԱՅԵՏԻ 25ԱՄԵԱԿ 2 ՄԱՅԻՄ 2003**

**ԿՈՒՉՈՒՄ**  
● FRIGO SERVICES հաստատութիւնը կարիքը ունի փորձառու թեքնիկներու օգնութիւններու եւ նորոգողներու: Դիմել՝ հեռ. 01-259923 եւ 03-344256:

**ՇՆՈՐԸԱԿԱԼԻՔ**  
● Տիկն Արփի Առաքելեան եւ գաւակները Պաղտիկ, Արա, Շաք եւ Սեւակ, ինչպէս նաեւ Առաքելեան ընտանիք, շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեց եղան իրենց ամուսնոյն, հոր եւ հարազատին՝ ԺԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ մահուան սուգին:

**ԳՐԱԴՈՒՄ**  
**ՕՐ**  
**ԱԶՏԱՍԱՐՏ ԿՈՍԻՏԷ 8 ՄԱՐՏ 2003 ՃԱԵԿԵՐՈՅԹ ՊԱՐԱԸԱՆԴԵՍ**

**ԳՐԱԴՈՒՄ**  
**ՕՐ**  
**29 ՄԱՐՏ 2003 Շ. Յ. Դ. «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԿՈՍԻՏԷ**



# Ն Ա Ի Ա Ս Ա Ր Գ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԻԱԿ

Ա. ՏԱՐԻ

ԹԻ 7

ՓԵՏՐՈՒԱՐ 2003

## ԱՆՊԱՐՏԵԼԻՈՒԹԻՒՆԸ ԶԱՓԱՆԻ՞Շ Է

**Խ**օսքը կը վերաբերի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբին, որ Բ. դասակարգի ախոյեանութեան երթի հանգրուանները ւարտեց առանց պարտութեան՝ արձանագրելով երկու հաւասարութիւն եւ ինը յաղթանակ: Բնական ակնկալութիւն է մանաւանդ համակիրին համար, որ այս ընթացքը շարունակուի մինչեւ ախոյեանութեան ւարտ, այսինքն՝ Հ.Մ.Ը.Մ. եղանակը ւարտէ առանց պարտութեան:

Սակայն, բնական այս մղումին զուգահեռ, կայ նաեւ ինքզինք պարտադրող հարցումը՝ «անպարտելիութիւնը չափանի՞շ է», որուն պատասխանը շատ կարեւոր է եւ պէտք է գայն ընկալել միայն ու միայն միութենական հասկացողութեամբ:

Եթէ պատասխանը կարճ - կտրուկ պիտի տանք, ապա անկա «ոչ» է: Բայց այդ «ոչ»ը ունի իր բացատրութիւնը անշուշտ, առանց որուն կը ստանայ լրիւ բացասական իմաստ, որ այս պարագային մեր փնտռածը չէ: Մեր ըսելիքը այն է, թէ «ոչ»ը պէտք է ընկալել միութենական հասկացողութեամբ (կը կրկնենք): Այսինքն՝ պէտք է ընդունիլ, որ Հ.Մ.Ը.Մ.ի համար անպարտելիութիւնը երբեք չափանիշ չէ, թէւ կ'ուզենք, որ դաշտերուն վրայ արդիւնքը ըլլայ յաղթութիւն: Սակայն հիմնականը, կենսականը դաշտէն դուրս, դաշտերէն անդին յաղթանակն է, ժողովրդային յաղթանակը, որ կը կերտուի միայն հոգիներուն մէջ: Եւ բարեբախտաբար Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն մեծ զանգուածը ըմբռնած է արդէն ատիկա, ինչ որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծագոյն յաջողութիւնն է: Շատ պատահած է, որ Հ.Մ.Ը.Մ. դաշտին վրայ պարտուի, բայց անոր համակիրները անտեսած են այդ պարագան (բնականաբար մարդկային բնազդով նեղուելով հանդերձ) եւ յաջորդին դաշտ գացած են միեւնոյն կորովով, միեւնոյն համոզումով ու միեւնոյն վճռականութեամբ: Եւ ասիկա յատուկ է Հ.Մ.Ը.Մ.ին, որուն գաղափարախօսութիւնը առաջնահերթ նպատակն է իր համակիրին համար, որմէ ետք միայն կու գան մրցումին արդիւնքը կամ այլ մանրամասնութիւններ:

Այս երեւոյթը յստախ ծիծաղի առարկայ կը դառնայ շատերու համար, յատկապէս մեր գաղափարական հիմքը եւ ժողովրդային լեւարանը չունեցողներուն համար, որոնք ամենայն մակերեսայնութեամբ կու տան վարդանանց պատերազմի բարոյական յաղթանակի օրինակը:

Բայց ի՞նչ փոյթ: Այդպէս մտածողները գաղափարապէս «վաքիում»ի մէջ են, հետեւաբար անոնց քնծիծաղները՝ անհասցէ: Եւ մենք անոնց կ'ըսենք հետեւեալը.

Այո՛, մեզի համար բարոյական յաղթանակը գերադաս է այլ յաղթանակներէ, որովհետեւ ատիկա մեր ժողովուրդին ազգային հարազատ նկարագիրը կը ցոլացնէ: Ասիկա կը նշանակէ ուրեմն, որ Հ.Մ.Ը.Մ. հարազատօրէն ազգային միութիւն կը մնայ ու պիտի շարունակէ այդպէս, նոյնիսկ եթէ այսօր աշխարհը կլանուած է համաշխարհայնացման խօլ ու վտանգաւոր յորձանուտին մէջ: Մենք պիտի յամառինք թիավարել այդ հոսանքին հակառակ ուղղութեամբ, գիտնալով հանդերձ, որ ատիկա այդքան ալ դիւրին ընթացք չէ: Բայց մինչեւ որ մեր նաւը ապահով հասցնենք նաւահանգիստ, պիտի թիավարենք այդ համոզումով, որուն համար անհրաժեշտ են միայն ու միայն բարոյական յաղթանակի տրամադրութիւններն ու համոզումը:

Ահա թէ ինչո՛ւ անպարտելիութիւնը չափանիշ չէ, թէւ ֆուտպոլի սոսկական հաճոյքին ու մարդու եսին շոյանքին «արդար» իրաւունքին համար պիտի փորձենք նաեւ յաղթական երթը շարունակել դաշտերուն վրայ, հրճուիլ յաղթանակներուն առթած հաճոյքով, որ սակայն չէ՛ ու չի՛ կրնար ըլլալ մեր գոյութեան իմաստը:

## ԱՐԹԻԻՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ԿՌՓԱՄԱՐՏԻ ՏԻՏԱՆԸ



**Գերմանահայ կռիւամարտիկ Արթիւր Գրիգորեան յաջորդաբար 17րդ անգամ ըլլալով պաշտպանեց թեթեւ կշիռքի աշխարհի ախոյեանի իր տիտղոսը**

(Տեսնել էջ 8)

ملحق أرتاك

# Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹ ԵՒՍ ՈՒՆԵՑԱԿ ՃԱՏՐԱԿԻ ԻՐ «ԴՊՐՈՑ»Ը



Փոքրերու եւ պատանիներու մօտ արթնցնելու եւ զարգացնելու համար մարզական սէրը, առողջ միտքը եւ վերլուծելու կարողութիւնը, Հ.Մ.Ը.Մ. միշտ հետամուտ եղած է ստեղծելու ամէն կարելիութիւն եւ դիրութիւն, եւ տրուած ըլլալով, որ ճատրակը այս բոլոր յատկութիւնները կը մէկտեղէ, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մէջ այս մարզախաղը սկսած է իր յատուկ դիրքը ունենալ:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մասնաճիւղը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ մասնաճիւղը Լիբանանի մէջ (առաջինը՝ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս), որ որդեգրեց ճատրակի մարզախաղը եւ կազմակերպեց ճատրակի դասընթացքներ, որոնք արդէն մեծ արձագանգ գտած են մարզասէր հասարակութեան մօտ:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի ճատրակի դասընթացքները տեղի կ'ունենան ամէն Ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 7:00էն 8:30, Էշրեֆիէի «Ազատամարտ» ակումբի «Ժաք Չուխատարեան» սրահին մէջ:

Դասընթացքներուն կը հետեւին 20 պարման - պարմանուհիներ, մարզիչ ունենալով եղբ. Շահան Եահնիեանը:

Ճատրակի մարզիկները իրենց մասնակցութիւնը բերած են Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՄի յանձնախումբին կազմակերպած մրցաշարքին եւ արձանագրած՝ հետեւեալ արդիւնքները.-

- 12 տարեկանէն վար, Ժիրօ Օգնայեան՝ առաջին
- 16 տարեկանէն վար, Յակոբ Թոսունեան՝ առաջին

Իսկ յատուկ գնահատանքի արժանացաւ 6 տարեկան Նարեկ Նաճարեան, որ մասնակցեցաւ 10 տարեկանէն վար մարզիկներու մրցաշարքին:

Նշենք նաեւ, որ 28 Դեկտեմբեր 2002ին, Լիբանանի ճատրակի ֆետերասիօնը կատարեց 2002ի մրցանակաբաշխումը: Հ.Մ.Ը.-Մ. Պէյրութի մասնաճիւղէն Մարիա Թոսունեան ստացաւ պրոնզ մետալ, Մայիս ամսուան մրցաշարքին գրաւելէ ետք Յրդ դիրքը:



## ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԿ ՏԸՇԻԷՆ

«Կոլտ Բոսթ»ի մէջ (Աւստրալիա) տեղի ունեցող թենիսի աղջկանց միջազգային մրցաշարքի աւարտականին, մրցաշարքին 2րդ դասուած մարզիկը, Ֆրանսացի Նաթալի Տըշի 6-3, 3-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք զուկցերիահայ Մարի Գայիանէ Միքայէլեանը, տիրացաւ տիտղոսին:

Եօթը տարի առաջ արհեստավարժ թենիսվումըն դարձած Տըշի, որ երրորդ անգամ ըլլալով աւարտական հանգրուան կը հասնէր, այսպիսով յաջողեցաւ շահիլ իր առաջին միջազգային տիտղոսը:

Երրորդ սեփին վիրաւորուելէ եւ ինամբի ենթարկուելէ ետք մրցումը շարունակած Միքայէլեան, իր մասնակցութիւնը պիտի բերէ Քանպերայի մէջ (Աւստրալիա) տեղի ունենալիք միջազգային մրցաշարքին, որ սկսաւ արդէն:

### ԱՐԱՄ ՀԱՃԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ ՍՈԼԹ ԼԵՅՔ ՍԻԹԻԻ ՉՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ

Փետրուարին, Սոլթ Լէյք Սիթիի (Մ. Ն.) մէջ տեղի ունենալիք Չմեռնային Ոլիմպիականի մրցումներուն մասնակցելու իրաւունք ստացաւ հայրենի դահուկարշաւ Արամ Հանեան, Ոլիմպիականի զտումի մրցումներուն լաւ արդիւնք արձանագրելէ ետք:

Այսպիսով, հինգի բարձրացաւ Հայաստանի մասնակցողներուն թիւը. երկու լեռնային դահուկարշաւներ, երկու պոպուլէտ եւ մէկ դահուկարշաւ:

# «ԽԵՆԹ» ՖՈՒԹՊՈՒԼԸ ԵՒ ԱՆՈՐ «ԽԵՆԹ» ՀԱՄԱԿԻՐՆԵՐԸ...

Պատկերասփիռն էն ֆուտպոլ կը դիտենք: Յանկարծ կոլ մը եւ սենեակը վերածուած է փողոցի: Տրամաբանութիւնը վրիպած է: Բացազանչութիւններ, պողոտայ, ճիշդ:

Ընկեր մը, որ բաւական հեռու է ընդհանրապէս մարզաշխարհէն եւ մասնաւորապէս մարզախաղերու թագաւորէն, այդ օր «սխալմամբ» մեր մէջ կը գտնուէր: Մեր կիսախենթ վիճակին ի տես, տղան ապշահար, բան չէր ըսած մեզի, բայց հիմա որ հանդարտած էինք այլեւս ու վերագտած՝ մեր բնականոն վիճակը, ըսաւ.

- Զարմանալի է ֆուտպոլ կոչուածը: Սոսկական կոլ մը՝ եւ երկվայրկեանի մէջ առնուազն երկու միլիաո մարդ, այսինքն մտաւորապէս աշխարհի բնակչութեան կէսը, մէկ մարդու պէս ոտքի կ'ելլէ: Բան մը, որ մինչեւ այսօր քաղաքական թէ որեւէ այլ ուժ կամ հոսանք չէ կրցած ընել ու պիտի չկարենայ ընել...

«Իրապէս թէ եւ կը սքանչանամ այդ ուժին, բայց նաեւ կը խղճամ հետզհետէ զարգացող մարդկային մտային այս ճղճիմութեան»:

- Մի՛ փիլիսոփայներ նորէն: Դուռն ո՛ր, ֆուտպոլը ո՛ր, - կ'ընդվզի յանկարծ մեզմէ մէկը եւ ծայր կու տայ վիճաբանութիւն մը, որ նաեւ կարծիքներու փոխանակում կարելի է կոչել:

Մեր ընկերը կը շարունակէ իր թէզը պաշտպանել ամենայն հանդարտութեամբ ու կ'ըսէ.

- Այդքան մարդ իր ուրախութենէն, այդպէս, մէկ անգամէն օդը պիտի ցատկէ՞ր արդեօք, եթէ բժիշկ մը կամ գիտնական մը բնութեան ցարդ անլաղթահարելի մէկ երեւոյթին յաղթէր եւ օրինակի համար գտնէր մեր օրերուն մոլորաբան զարմած ՍԻՏԱԻՆ զարմանք: Կը կասկածիմ: Ծիշդ է, որ այդ կոլին մէջ ծափահարելի ճիգ կար, ճարտարութիւն կար, նոյնիսկ տաղանդ թերեւս, բայց երկվայրկեանական այդ նուաճումը եթէ բաղդատութեան դնենք պահ մը՝ ամբողջ կեանք մը ճգնած ու զոհաբերած գիտութեան թէ մշակոյթի այն հազարաւոր սպասարկումներուն հետ, որոնք սակայն երբեք այդքան չծափահարեցան, ի՞նչ արժէք կը ներկայացնէ այդ կոլը կամ անոր հեղինակը...

«Ահա թէ ինչո՛ւ կ'ըսենք, որ մարդիկ ու ժողովուրդներ սկսած են ճղճիմնալ եւ փաստօրէն ահաւասիկ մշակոյթի նահանջը՝ ոտքով խաղցող սա հասարակ մարզախաղին առջեւ...»:

- Որոշ չափով կարծիքներդ կը բաժնենք, բայց ոչ բոլորը, - կ'ըսէ ըն-



կեր մը ու կ'աւելցէ. - Իրաւունք ունիս, երբ կ'ըսես, թէ մարդիկ սկսած են հետզհետէ ճղճիմնալ եւ անտեսել մտային արժէքներ ու մարդկային արժանիքներ, եւ կը վազեն թեթեւութիւններու ետեւէն: Այդ չի նշանակեր, սակայն, որ ֆուտպոլի սիրահարները մտքով բոպիկ են: Բնաւ: Այսօր մշակոյթի տէր բարձր ժողովուրդներու մօտ է որ ամէնէն աւելի փնտռուած է ֆուտպոլը եւ նախագահէն, քաղաքական անուանի անձնաւորութիւններէն մինչեւ թագաւորը, մտաւորականը, մշակոյթի մարդը կամ բանուորը, առանց սեռի ու տարիքի խտրութեան սիրահար են ֆուտպոլի եւ անոնցմէ իրաքանջիրը կ'ապրի այն իրավիճակը, որուն քիչ առաջ ակնարկեցիր կոլի նշանակման առիթով: Ուրեմն, անոնք բոլորն ալ մտքով ճղճիմնե՞ր են...

- Լաւ, դո՛ւն ի՞նչպէս կը բացատրես կացութիւնը:

- Ծիշդ է, որ ֆուտպոլին մէջ անհաճոյ բաներ կան այսօր, անիկա քաղաքականացած է ու մանաւանդ առեւտրականացած, ինչ որ պատճառ կ'ըլլայ անոր մասին հետաքրքրութեան ընդարձակումին: Սակայն կան երկու այլ տուեալներ: Անշուշտ այս բոլորը, հոգեբանական իրենց երեսէն անկախ, որուն բացատրութիւնը վստահաբար հոգեբանները ունին, բան մը որ մեր մասնագիտութիւնը չէ եւ կը վերաբերի անոնց: Առաջին՝ ֆուտպոլը հաւաքական խաղ է եւ միակն է թերեւս մարզախաղերուն մէջ, որ դաշտին վրայ մարզիկներուն կողքին համակիրը եւս մասնակից է անոր, որ ամբողջ 90 վայրկեան ամէնէն աննշան շարժումն իսկ տեսանելի է ու ապրում է:

Էականը հետեւեալն է սակայն.

21րդ դարուն, նիւթապաշտութեան ու մեքենացած կեանքի հետքին մէջ, մարդ արարածը ֆիզիքապէս թէ միտքով այնքա՞ն կը ծանրաբեռնուի իր առօրեային ընթացքին, որ այդ յոգնութիւնը տեղ մը պողոթկալու, մեղմացնելու անխուսափելի պահանջը կը զգայ եւ բնագոյական մղում մը ունի: Հետեւաբար, ինչպէս այլ մարզախաղեր ու զուարճութիւններ, բայց մանաւանդ ֆուտպոլը իր ստեղծած կիրքով կը դիրացնէ մտքի արձակուրդի այդ պահանջը:

Ահա թէ ո՛ր կը գտնուի կոլի մը առթած երկվայրկեանական պողոթկումին բնագոյային անդրադարձին շարժառիթը:





# ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ՝ ՊՐՕ ՔԷՀԷՆԱՆԻ ՀԵՏ

**Հ Ա Ր Ց Ո Ւ Մ . -**  
*Երեք եղանակ հե-  
ռու մնալ է ետք  
Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտ-  
պոլի ներկայա-  
ցուցչական խում-  
բին 2002-2003  
եղանակին վերա-  
դարձար այն  
ակումբին, որուն  
հետ առաջին ան-  
գամ ելոյթ ունե-  
ցար 1986ին: Այդ  
ուղղութեամբ ի՞նչ  
ունիս ըսելիք:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ինչպէս ծանօթ է բոլորին, 1998-1999 եղանակի աւարտին Հ.Մ.Ը.Մ.ը լքելով միացայ Նրժմէի: Վստահաբար շատեր այդ օրերուն անակնկալի եկան այս գծով, սակայն իրողութիւնը այդ էր, որուն մանրամասնութիւններուն մէջ մտնելը ներկայիս կը գտնեն երկրորդա-կան:

1986ին փոխանցուելով Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի կրտսերներէն, առաջին անգամ ըլլալով կրեցի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի ներկայացուցչա-կան խումբին շապիկը, երբ 16 տարեկան էի: Խումբին հետ մնացի մինչեւ 1998, որմէ ետք փոխանցուեցայ Նրժմէի: Բայց այսօր ահաւասիկ վերա-դարձած եմ սիրելի ակումբիս եւ այդ մէկը այնպիսի պահու, երբ խումբը փոխադրուած էր Բ. դասակարգ՝ իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով:

Նրժմէ փոխանցուիլս վստահաբար մէջս չմարեց Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ զգացումներս. սիրալոծար վերադարձայ խումբիս՝ ընդառաջելով մար-զիչ Վաչէ Սարգիսեանի առաջարկին, որուն համար բնաւ չեմ զղջացած:

**Հ.- Ի՞նչ տարբերութիւն գտար Բ. դասակարգի ախոյեանութեան եւ Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն միջեւ: Արդեօք անոնք երկուքը իրարու կը նմանի՞ն, թէ Բ. դասակարգի ախոյեանութիւնը աւելի դիւրին է:**

Պ.- Ընդհակառակը, Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն մասնակցիլը աւելի դժուար է, քան Ա. դասակարգի, որովհետեւ Ա. դասակարգին մէջ կը հանդիպիս շատ տեւի արհեստավարժ ֆուտպոլիստներու, քան՝ Բ. դասակարգին մէջ, ուր մարզիկներ գրեթէ չունին ֆուտպոլիստի հասկացողութիւնը եւ պար-զապէս կը կարծեն, որ ֆիզիքական յատկու-թիւններ ունենալն է կարեւորը:

Ծատ մը մարզիկներ Բ. դասակարգին մէջ ֆուտպոլէն գաղափար իսկ չունին, այլ պարզա-պէս գնդակին ետեւէն կը վազեն եւ շատ յաճախ ալ կը կատարեն վտանգաւոր ֆաուլեր, որոնք կրնան իրենց վատ ազդեցութիւնը ունենալ ֆաուլի ենթարկուող մարզիկներուն համար:

**Հ.- Նրժմէի մաս կազմած ժամանակէն, արդե-  
օք որքան դժգոհութիւն ունեցա՞ր: Հոս ամառին  
է հարց տուա՞յ, թէ անոր հետ ի՞նչ բաժանակներու  
կըրցար տիրաւանալ:**

Պ.- Նրժմէի հետ երկու անգամ շահեցայ Լի-բանանի ֆուտպոլի ախոյեանութիւնը (2001ին եւ 2002ին), իսկ մէկ անգամ ալ՝ «Վայսրոյ» ֆու-պոլի բաժակի մրցաշարքը (2001ին), երեք տար-

ւան ընթացքին: Սակայն ոչ մէկ ատեն անախորժ անակնկալի մատնուե-ցայ Նրժմէի մաս կազմած շրջանիս: Ընդհակառակը, մեծ յարգանքի կ'արժանանայի եւ միշտ ալ կը յարգուէի ըլլա՛յ մարզիչին, ըլլա՛յ պա-տասխանատուներուն, ըլլա՛յ համակիրներուն, ըլլա՛յ մարզիկներուն կողմէ:

**Հ.- Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նրժմէի մաս կազմելէ բացի, կրած ես նաեւ Լիբա-  
նանի ֆուտպոլի ազգային խումբին շապիկը: Արդեօք ազգային խում-  
բին հետ անտոնանալի կոլ մը նշանակա՞ծ ես:**

Պ.- Առաջին անգամ ազգային խումբին շապիկը կրեցի 1995ին, երբ այդ օրերուն մարզիչն էր Ատնան Ծարքի: Անոր կողմէ իբրեւ հիմնական մարզիկ նկատի առնուելով, մինչեւ 1999 մաս կազմեցի ազգային խում-բին, իմ կողքիս ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի խմբակիցս՝ Վարդան Ղազարեա-նը, որուն հետ բացառիկ խաղարկութիւն կ'ունենայի:

Նշանակած եմ շատ մը կոլեր, սակայն ամէնէն աւելի յիշատակելի կոլը, որ նշանակած եմ, այդ ալ Վրաստանի դէմ բարեկամական մրցու-մին ընթացքին էր, երբ հետուէն զօրաւոր հարուածով մը պարտութեան մատնեցի բերդապահը:

**Հ.- Լիբանանի Բ. դասակարգի ախոյեանութեան 2002-2003 եղանա-  
կի երթի մրցումները այժմ աւարտած են եւ Հ.Մ.Ը.Մ. կը գրաւէ ընդհա-  
նոր դասաւորման պարագլուխի դիրքը, առանց պարտութիւն կրելու:  
Ի՞նչ կրնաս ըսել այս ուղղութեամբ:**

Պ.- Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն կու գամ ըսելու, որ թէեւ կտրած ենք ճամբուն կէտը եւ կը գտնուինք լաւ դիրքի վրայ, սակայն տակաւին նոյն-քան մրցումներ ունինք կատարելիք: Հետեւաբար անոնց կը թելադրեմ ըլլալ քիչ մը համբերող եւ սպասել դարձի մրցումներուն աւարտին:

Այժմէն իսկ խանդավառուիլը կը գտնեն սխալ, որովհետեւ ախոյեա-նութիւնը կ'աւարտի դարձի մրցումներէն ետք եւ ոչ թէ երթի մրցումնե-րէն ետք: Թէեւ ցարդ մեր կատարած 11 մրցումներուն ընթացքին արձա-նագրած ենք ինը յաղթանակ եւ երկու հաւասարութիւն, այսուհանդերձ պէտք է ըլլալ զուսպ եւ այսօրուրնէ տօնախմբութիւններու պէտք չէ սկսիլ: Այնպէս ինչպէս ֆուտպոլի մրցում մը կ'աւարտի իրաւարարին սուլիչին ետք, նոյն մօտեցումը պէտք է ունենալ նաեւ այս պարագային:

**Հ.- Կը կարծե՞ս, որ դարձի մրցումները  
կրնան ըլլալ դժուար, թէ՛ նախորդներուն  
նման:**

Պ.- Երթին մեր կատարած երկու մրցումնե-րուն (Ահլի Սայտայի եւ Ռիատա Ուալ Ատապի դէմ) կորսնցուցինք չորս արժեքաւոր կէտեր: Այդ հաւասարութիւնները մեզի համար պար-տութեան համազօր եղան: Կը յուսամ, որ դար-ձի մրցումներուն ոչ մէկ կէտ կը կորսնցնենք, թէեւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ երեք մրցում ունինք կատարելիք միայն, չորս մրցում պիտի կատարենք Թրի-փոլի մէջ, երկու մրցում՝ Խիսրայի մէջ եւ եր-կու մրցում՝ Ժունիէի մէջ:

**Հ.- Որքան խօսք ունի՞ս ՀՄԸՄի համա-  
կիրներուն փոխանցելիք:**

Պ.- Նախ շնորհակալութիւն կը յայտնեմ «Նաւասարդ» ամսաթերթին, որ ինձի այս հար-ցազրոյցին առիթը տուաւ: Ինչ կը վերաբերի Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն, անոնց կու գամ ըսելու, որ այնպէս ինչպէս նեղ օրերուն նեցուկ կանգնեցան խումբին, նոյն թափով եւ աւելիով իրենց նոյն ընթացքը շարունակեն:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ՝ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 2002-2003 եղանակի բացման մրցումին, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական խումբը յաղթանակով սկսաւ, երբ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ 3-1 արդիւնքով (Կիսախաղ՝ 2-0) պարտութեան մատնեց Հըրրիէ Մաժտալ Այնճարը: Հ.Մ.Ը.Մ.Ի կողմը նշանակեցին Բաֆֆի Ջուլֆայեան, Դրօ Քէհէան եւ շուէտացի Թոմաս Պիրոք:

2րդ հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական կազմը 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Նահտա Պար էլիսը: Երեք անպատասխան կոլեր նշանակեցին Վարդան Ղազարեան, Թոմաս Պիրոք եւ Յակոբ Տօնապետեան:

3րդ հանգրուանի մրցումներուն Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի կազմը մրցում չկատարեց, նկատի ունենալով, որ անոր մրցակիցը՝ Ֆիթիան Սայտա, Գ. դասակարգ փոխադրուած կը նկատուի ախոյեանութեան մրցումներու չմասնակցելուն համար:

4րդ հանգրուանին Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական խումբը 5 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց Մահապպա Թրիփոլին եւ անկէ խլեց պարագլուխի դիրքը:

5րդ հանգրուանին, Ժունիէի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. դժուար յաղթանակ մը արձանագրեց Թրիփոլի Շապապին դէմ, 1-0 արդիւնքով:

Այս եղանակին առաջին անգամ ըլլալով էր, որ Հ.Մ.Ը.Մ. դժուարութեամբ կ'արձանագրէր իր յաղթանակը, ինչպէս նաեւ առաջին անգամն էր, որ ան լաւ խաղարկութիւն չունեցաւ, թէեւ մրցակիցին շատ աւելի ներկայութիւն էր դաշտին վրայ ու կը ճնշէր անոր վրայ: Սակայն յատկապէս դաշտին կեդրոնը Հ.Մ.Ը.Մ. չունեցաւ իրեն վայել խաղարկութիւն:

6րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը 5 - 1 արդիւնքով ջախջախեց Իժթիմահին Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ՝ այսպիսով արձանագրելով եղանակի իր հինգերորդ յաղթանակը եւ ապահովելով առաւելագոյն 15 կէտերը:

Հիւսիսի մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած մրցումին, թէեւ Իժթիմահին ինք բացաւ մրցումին հաշիւը, սակայն Հ.Մ.Ը.Մ. Ա. կիսախաղը աւարտեց 2 - 1 արդիւնքով, շնորհիւ՝ Բաֆֆի Ջուլֆայեանի (փենալթիով) եւ Յակոբիկ Տօնապետեանի կողմէ նշանակուած կոլերուն: Բ. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. իր յարձակումները աւելի եւս սաստկացնելով՝ նշանակեց յաւելեալ երեք կոլեր եւս, շնորհիւ՝ Դրօ Քէհէանի, Բաֆֆի Ջուլֆայեանի եւ Վարդան Ղազարեանի:



7րդ հանգրուանին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. իր բազմահազար համակիրներուն ներկայութեան արձանագրեց եղանակի իր վեցերորդ յաջորդական յաղթանակը, այս անգամ պարտութեան մատնելով Ռասինկը՝ 4-0 արդիւնքով:

8րդ հանգրուանին Հ.Մ.Ը.Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը, որ իր մրցումը կատարեց Քֆարթոզ Նապաթիէի դաշտին վրայ, երեք կէտով վերադարձաւ Պէյրութ՝ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք դաշտին տէրը՝ Թատամոն Նապաթիէն:

9րդ հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ. 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հ.Մ.Ս.ը, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ: Գագաթի այս ճակատումին, մրցումէն աւելի ուշագրաւ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն ներկայութիւնը. անոնք աւելի քան 6 հազար հոգիով խոնուած էին Թրիպոլիներուն մէջ:

10րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. «արձակուրդի» մէջ էր, որովհետեւ անոր մրցակիցը Շապապ Խիամ քաշուեցաւ ախոյեանութենէն: Նոյնն էր պարագան նաեւ Ռասինկի, որովհետեւ Ֆիթիան Սայտա եւս քաշուեցաւ ախոյեանութենէն:

11րդ հանգրուանի մրցումներուն Սուրի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած Ահլի Սայտա - Հ.Մ.Ը.Մ. մրցումը վերջ գտաւ 1-1 արդիւնքով:

Հարաւի կազմը Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով յառաջացաւ, շնորհիւ՝ Հասան Խասքէի նշանակած կոլին: Բ. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. նշանակեց իր հաւասարութեան կոլը, շնորհիւ՝ Բաֆֆի Ջուլֆայեանի (փենալթիով):

12րդ եւ երթի նախավերջին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. ֆուտբոլի խումբը, որ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ հիւրընկալեց Ռիատա Ուալ Ատապը, 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ:

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 13րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը արձանագրեց եղանակի իր 9րդ յաղթանակը, յաղթական վերադառնալէ ետք Իսլահ Պըրժ Շիմալիի դաշտէն, ուր 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տէրերը՝ Իսլահ Պըրժ Շիմալին:



# ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱԽՈՐՈՒՄԸ

**Ա. ՀԱՆԳՐՈՒՄ**

Հ.Մ.Ը.Մ. - Հրրիէ Մաժտալ Այնճար 3-1  
Թատամնն Նապարթիէ - Իժթիմահի 1-0  
Հ.Մ.Մ. - Շապապ Թրիփոլի 2-1  
Իսլահ Պրթ Շիմալի - Ռասինկ 0-0  
Նահտա Պար Էլիաս - Ռիատա Ուալ Ատապ 0-2

**Բ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Մահապպա - Ահլի Սայտա 2-1  
Ռասինկ - Թատամնն Նապարթիէ 0-2  
Իժթիմահի - Հ.Մ.Մ. 2-1  
Հ.Մ.Ը.Մ. - Նահտա Պար Էլիաս 3-0  
Հրրիէ Մաժտալ Այնճար - Իսլահ Պրթ Շիմալի 1-0

**Գ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Հ.Մ.Մ. - Ռասինկ 2-1  
Թատամնն Նապարթիէ - Իսլահ Պրթ Շիմալի 1-1  
Շապապ Թրիփոլի - Ահլի Սայտա 2-1  
Ռիատա Ուալ Ատապ - Մահապպա 0-0  
Նահտա Պար Էլիաս - Հրրիէ Մաժտալ Այնճար 1-0

**Դ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Ռիատա Ուալ Ատապ - Շապապ Թրիփոլի 1-1  
Իսլահ Պրթ Շիմալի - Նահտա Պար Էլիաս 4-2  
Հ.Մ.Ը.Մ. - Մահապպա 5-2  
Թատամնն Նապարթիէ - Հ.Մ.Մ. 1-7  
Ահլի Սայտա - Իժթիմահի 0-1

**Ե. ՀԱՆԳՐՈՒՄ**

Մահապպա - Հրրիէ Մաժտալ Այնճար 2-1  
Ահլի Սայտա - Ռասինկ 2-5  
Հ.Մ.Ը.Մ. - Շապապ Թրիփոլի 1-0  
Հ.Մ.Մ. - Իսլահ Պրթ Շիմալի 4-4  
Ռիատա Ուալ Ատապ - Իժթիմահի 1-1

**Զ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Հրրիէ Մաժտալ Այնճար - Շապապ Թրիփոլի 0-1  
Ռասինկ - Ռիատա Ուալ Ատապ 1-0  
Իժթիմահի - Հ.Մ.Ը.Մ. 1-5  
Նահտա Պար Էլիաս - Մահապպա 2-1  
Թատամնն Նապարթիէ - Ահլի Սայտա 1-2

**Է. ՀԱՆԳՐՈՒՄ**

Ռիատա Ուալ Ատապ - Թատամնն Նապարթիէ 2-1  
Շապապ Թրիփոլի - Նահտա Պար Էլիաս 1-0  
Հ.Մ.Մ. - Ահլի Սայտա 2-0  
Հ.Մ.Ը.Մ. - Ռասինկ 4-0  
Հրրիէ Մաժտալ Այնճար - Իժթիմահի 2-1

**Ը. ՀԱՆԳՐՈՒՄ**

Ռասինկ - Հրրիէ Մաժտալ Այնճար 2-0  
Թատամնն Նապարթիէ - Հ.Մ.Ը.Մ. 1-3  
Նահտա Պար Էլիաս - Իժթիմահի 4-2  
Մահապպա - Իսլահ Պրթ Շիմալի 1-2  
Հ.Մ.Մ. - Ռիատա Ուալ Ատապ 1-1

**Թ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Ռասինկ - Նահտա Պար Էլիաս 3-1  
Շապապ Թրիփոլի - Մահապպա 3-0  
Հրրիէ Մաժտալ Այնճար - Թատամնն Նապարթիէ 1-1

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Մ.Մ 3-0

Իսլահ Պրթ Շիմալի - Ահլի Սայտա 5-1

**Ժ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Իժթիմահի - Մահապպա 3-2  
Հ.Մ.Մ. - Հրրիէ Մաժտալ Այնճար 5-3  
Ռիատա Ուալ Ատապ - Ահլի Սայտա 2-0  
Շապապ Թրիփոլի - Իսլահ Պրթ Շիմալի 1-1  
Թատամնն Նապարթիէ - Նահտա Պար Էլիաս 2-0

**ԻԱ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Մահապպա - Ռասինկ 2-1  
Ահլի Սայտա - Հ.Մ.Ը.Մ. 1-1  
Շապապ Թրիփոլի - Իժթիմահի 0-0  
Նահտա Պար Էլիաս - Հ.Մ.Մ. 1-3  
Իսլահ Պրթ Շիմալի - Ռիատա Ուալ Ատապ 2-0

**ԻԲ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Իժթիմահի - Իսլահ Պրթ Շիմալի 0-0  
Ահլի Սայտա - Հրրիէ Մաժտալ Այնճար 1-1  
Հ.Մ.Ը.Մ. - Ռիատա Ուալ Ատապ 1-1  
Ռասինկ - Շապապ Թրիփոլի 3 - 1  
Թատամնն Նապարթիէ - Մահապպա 0-0

**ԻԳ. ՀԱՆԳՐՈՒՄ**

Ռիատա Ուալ Ատապ - Հրրիէ Մաժտալ Այնճար 3-3  
Ռասինկ - Իժթիմահի 0-1  
Մահապպա - Հ.Մ.Մ. 1-2  
Թատամնն Նապարթիէ - Շապապ Թրիփոլի 4-0  
Նահտա Պար Էլիաս - Ահլի Սայտա 0-1  
Իսլահ Պրթ Շիմալի - Հ.Մ.Ը.Մ. 0-3

ՍՏՈՐԵՒ՝ Բ. դասակարգի դասաւորումը. երթի մրցումներուն աւարտին (բոլոր խումբերն ալ կատարած են 11ական մրցում)։

	Յ.	Ը.	Պ.	ՆԾ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Հ. Մ. Ը. Մ.	9	2	0	32	7	29
2.- Հ. Մ. Մ.	7	2	2	29	18	23
3.- Իսլահ	4	5	2	19	13	17
4.- Ռասինկ	5	1	5	16	15	16
5.- Ռիատա	3	6	2	14	12	15
6.- Շապապ	4	3	4	11	13	15
7.- Իժթիմահի	4	3	4	12	16	15
8.- Նապարթիէ	3	3	5	13	18	12
9.- Նահտա	4	0	7	13	20	12
10.- Մահապպա	3	2	6	13	20	11
11.- Սայտա	3	1	7	11	21	10
12.- Հրրիէ	2	2	7	13	22	8

# ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

## ՅՈՒԹՊՈՒ

### ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐԺԱՆԹԻՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Մարտին, Հայաստանի ֆուտբոլի հաւաքականը պիտի մեկնի Արժանթին, ուր շարք մը փորձ - մրցումներ պիտի կատարէ տեղւոյն կարեւորագոյն խումբերուն հետ: Կը նախատեսուի նաեւ, որ Մարտ Յին՝ Հայաստանի հաւաքականը «իր ուժերը չափէ» Արժանթինի ազգային խումբին հետ:

### ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարի եւս Հայաստանէն 4 խումբեր իրաւունք պիտի ունենան մասնակցելու Եւրոպայի ախոյեանութիւններուն:

Եւր. Է. Էֆ. Ա. յատուկ դասաւորում կատարած է «Չէմփիոնզ Լիկ»ի պարագային, որոշելով, որ Ա. հանգրուանին մրցաշարքէն դուրս մնացող խումբեր յաջորդ տարի իրաւունք պիտի չունենան նոյն այս մրցաշարքին մասնակցելու:

### ՔԱՐԱՄԵԱՆ ԵՂՔԱՅՐՆԵՐԸ ԴԵՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ

«Փիւնիկ»ի «սին»երէն՝ Արման եւ Արտուազդ Քարամեանները այս տարեշրջանին հանդէս պիտի գան Յունաստանի «Փանահայիքի» կազմէն: Կը նախատեսուի, որ Քարամեան եղբայրները 360,000 տոլարի փոխ տրուէին «Սպարտակ - Ալանիա» խումբին, սակայն երբ խումբը ուշացուց գումարին փոխանցումը, «Փիւնիկ» Քարամեան եղբայրները «վաճառեց» յունական կազմին:

### ՓԻՒՆԻԿ ՀԱՐԱՄԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ «ԿԸ ՆԵՐԱԾԷ»

Հայաստանի ֆուտբոլի ախոյեան եւ բաժակակիր «Փիւնիկ» 2003ի ախոյեանութիւններուն պիտի մասնակցի «վերաթարմացած» կազմով: «Փիւնիկ»ի շարք մը ֆուտբոլիստներ արդէն պայմանաւորուած են միջազգային այլ ակումբներու հետ, իսկ հայրենի կազմը անոնց փոխարէն դաշտ պիտի ներկայացնէ Արժանթինէն եւ Պրագիլէն հրաւիրուած շարք մը ֆուտբոլիստներ:

### ԱՆԴՐԱՆԻԿ ԱԳԱՄԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐԶԻՉ

«Շիրակ» Գիւմրիի մարզիչ Անդրանիկ Ադամեան վերստին նշանակուեցաւ Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի մարզիչ, այսպիսով յաջորդելով արժանթինցի Օսքար Լոփէսի, որ վերջերս չէր ուզած իր պաշտօնը շարունակել:

Նախքան Լոփէսի մարզիչ նշանակումը, ազգային խումբին մարզիչն էր նոյնիքն Ադամեան, որ երեք ամիս իր պաշտօնին վրայ մնալէ ետք իր տեղը զիջած էր Լոփէսի:

Նախքան Ադամեանի նշանակումը կը խօսուէր ֆրանսացի Հանրի Միշէլի մասին, որ այդ իսկ պատճառով Հայաստան եկած էր: Սակայն ան չկարենալով համաձայնութեան գալ Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնին հետ, վերադարձաւ իր երկիրը:

Ըստ Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնի նախագահ Ռուբէն Հայրապետեանի, Հանրի Միշէլ համաձայն գտնուած էր միայն ինը ամսուան պայմանագրութիւն մը ստորագրել, սակայն այդ մէկը գոհ չէր ձգած Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնը, որ դարձեալ դիմած էր Անդրանիկ Ադամեանի:

Նախապէս, երկու օտար մարզիչներ իրենց թեկնածութիւնը առաջարկած էին այդ պաշտօնին համար, սակայն Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնը մերժած էր Թէոֆիլօ Քուպիասի (Ուրուկուէյ) եւ Մա-

րիուս Լաքսաթուշի (Ռումանիա) առաջարկները: Թէեւ անոնք հանրածանօթ ֆուտբոլիստներ եղած են, սակայն ոչ՝ անուանի մարզիչներ:

## ՄԱՏՐՈՎ

### ՎԼԱՏԻՄԻՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ 11ՐԴ

Յունուարի սկիզբը միջազգային ճատրակի ֆետերասիոնը հրապարակեց ճատրակի վարպետներու դասաւորումը: Հայրենի ճատրակի աստղերէն Վլատիմիր Յակոբեան, ապահովելով 2713 կէտ, կը գրաւէ դասաւորման 11րդ դիրքը:

Դասաւորման պարագլուխի դիրքը կը շարունակէ մնալ Կարի Գասպարովի մենաշնորհը:

### ՅԱԿՈՒԲԵԱՆ ԵՒ ԳԱՆՏՈՒՆՅ ՄՐՅԱՆԱԿՎԻՐՆԵՐ

Հայաստանը ներկայացնող ճատրակի վարպետ Սերկէյ Գալտունց Գերմանիոյ բաց մրցաշարքին հանդիսացաւ Յրդ:

Հայաստանէն այլ երիտասարդ վարպետ մը՝ ամերիկաբնակ Վարուժան Յակոբեան Լոս Անճելըսի միջազգային մրցաշարքին ախոյեանը հանդիսացաւ:

### ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՏԻՐԱՅԱԻ ՏՐԵՍՏԸՆԻ ՄՐՅԱՇՄԱՐՔԻՆ

2002ին ճատրակի 20 տարեկանէն վար աշխարհի ախոյեանութեան տիտղոսին տիրացած Լեւոն Արոնեան, 2003 տարին սկսաւ յաջողութեամբ եւ Հայաստանի անունը դարձեալ պահեց բարձր, երբ Տրեստընի (Գերմանիա) մէջ տեղի ունեցած ճատրակի միջազգային մրցաշարքին, հանդիսացաւ ախոյեան: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերէին 256 խաղացողներ:

Իր կատարած ինը մրցումներուն բոլորին ալ յաղթանակ արձանագրած Արոնեան, այսպիսով կը շահի յաջորդական իր հինգերորդ մրցաշարքը:

## ԹԵՆԻՍ

### ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ ՄՏԱԳԻՐ Է...

Անցնող տարիներուն, Հայաստանի թիւ 1 թենիսմէն Սարգիս Սարգսեան, որ հաստատուած է Միացեալ Նահանգներ, հազուադէպօրէն մաս կազմած է Հայաստանի հաւաքականին:


Հայաստանի թենիսի ֆետերասիոնը ակնարկելով Հայաստանի կազմին ձեւաւորումին մասին ըսաւ, թէ այդ մէկը կախեալ է խումբին մէջ Սարգիս Սարգսեանի ընդգրկուելուն հետ, որովհետեւ առանց անոր՝ հաւաքականը նուազ նախանձելի պատկեր կը պարզէ, աւելցնելով, որ բանակցութիւնները շատ արագ պիտի պարզեն, թէ Սարգսեան արդեօ՞ք մտադիր է վերջնականօրէն հրաժարելու Հայաստանի հաւաքականէն ելոյթ ունենալէ:

## ԲՄՔԱՄՍԼՔՏ

### ՀԱՅ ԸՄԲԻՇՆԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԵՐՆԵՐԸ

Ազատ ոճի ըմբշամարտի հայրենի ներկայացուցիչները «իրենց ուժերը փորձաքարի պիտի գարնեն» յառաջիկայ Ապրիլին՝ Հունգարիոյ մէջ տեղի ունենալիք Եւրոպայի ախոյեանութեան:

Նշենք, որ Սեպտեմբեր 3 - 10 Նիւ Եորքի մէջ տեղի ունենալիք աշխարհի ախոյեանութեան կողքին, այս ախոյեանութիւնը կը հանդիսանայ տարուան կարեւորագոյն մարտահրաւիրը՝ հայրենի մարզիկներուն համար:





# ԱՐՔԻՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ՎԵՐՍՏԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

**Շ**աբաթ, 18 Յունուար 2003ին, գերմանահայ Արթիր Գրիգորեան 17րդ անգամ ըլլալով պաշտպանեց կոփամարտի «Տապլիու. Պի. Օ.» թերթի կշիռ աշխարհի ախոյեանութեան իր տիտղոսը, այս անգամ պարտութեան մատնելով լեհ Քարլ Զականը:

Այս ճակատումը եղաւ Գրիգորեանի ասպարէզին դժուարագոյններէն մէկը: Արդարեւ, հալազգի մարզիկին ի նպաստ միշտ տուին երկու իրաւարարներ (115 - 113 եւ 115 - 112), մինչ երրորդ իրաւարարը հաւասար կէտեր շնորհեց երկու կոփամարտիկներուն (114 - 114): Ծակատումի աւարտին, Գրիգորեանի զոյգ աչքերուն շուրջ պատռուածքներ կային:

Արթիր Գրիգորեան ծնած է 20 Հոկտեմբեր 1967ին՝ Թաշքէնթ, Ուզպէքիստան: Ան իր կնոջ եւ երեք աղջիկներուն հետ հաստատուած է Համպուրկ:


Նախքան արհեստավարժ ասպարէզ մուտք գործելը, ան շահած է Բարի կամեցողութեան խաղերու ոսկի մետալը (1990) եւ հանդիսացած է աշխարհի փոխ ախոյեան (1991): Արհեստավարժ դառնալէն տարի մը ետք, 1996ին, Գրիգորեան կը շահի «Տապլիու. Պի. Օ.»ի թերթի կշիռի աշխարհի ախոյեանութիւնը. տիտղոս մը, զոր կը պահէ մինչեւ օրս:

# ԳԱԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՀԱՍԱԲ ԲԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Աւստրալիոյ բաց մրցաշարքին Դաիթ Նալպանտեան եկաւ փաստելու, որ ճախորդ տարուան Ուիմպլըտընի մրցաշարքին կատարած իր սխրանքը պատահական չէր:

Արդարեւ, Նալպանտեան տարուան առաջին կրան շլէմին արձանագրեց 4 յաղթանակներ, որոնցմէ ամէնէն յատկանշականը՝ մրցաշարքի թիւ 6 դասուած գուիցերիացի Ռոմէ Ֆետերերի դէմ, եւ հասաւ քառորդ աւարտական հանգրուան: Նալպանտեանի եւ Ֆետերերի միջեւ 4րդ հանգրուանի ճակատումը սակայն մարաթոնային էր եւ 6 - 4, 3 - 6, 6 - 1, 1 - 6, 6 - 3 արդիւնքով յաղթանակ արձանագրած Նալպանտեան զգալիօրէն յոգնած կ'երեւէր քառորդ աւարտականի իր մրցումի ընթացքին, ուր գերմանացի Ռայնըր Ծուլըրըին դիմաց տեղի տուաւ, 3 - 6, 7 - 5, 1 - 6, 0 - 6 արդիւնքով:

Ամենայնդէպս, Նալպանտեանի քառորդ աւարտական հասնիլը բաւարար էր, որ ան տարին սկսի գրաւելով միջազգային դասաւորման (Չէմփիընզ Ռէյն) 9րդ դիրքը:



# ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ «ԱՆԶՈՒԳԱԿԱՆ» ԿՐԱՆ ՇԼԷՄԸ

Յունուարին տեղի ունեցած Աւստրալիոյ բաց մրցաշարքը հայրենի թենիսմէն Սարգիս Սարգսեանի համար եղաւ «անզուգական»: Արդարեւ, աշխարհի թիւ 94 դասուած Սարգսեան իր ասպարէզին մէջ առաջին անգամ ըլլալով յաջողեցաւ հասնիլ կրան շլէմի մրցաշարքի մը 4րդ հանգրուանին: Նախապէս ան մասնակցած էր 24 կրան շլէմներու եւ անոնցմէ ոչ մէկուն ընթացքին կրցած էր 3րդ հանգրուանին յաղթական դուրս գալ:

Սարգսեանի նուաճումը առաւել փայլք ստացաւ, տրուած ըլլալով որ այդ մէկը եղաւ աւստրալիացի հօօր թենիսմէն Մարք Ֆիլիփուսիսի դէմ:

Իր յաղթանակէն ետք Սարգսեան շնորհակալութիւն յայտնեց հայ «աղմկարար» քաջալերողներուն: «Հայեր կը գտնէք ամէնուրեք», ըսաւ ան, «ամէն տարի կու գամ հոս եւ 50 - 100 հաւատաւոր հայ քաջալերողներ տեսաբար ներկայ են: Անոնք անհաւատալիօրէն կը քաջալերեն զիս, հակառակ անոր որ լաւ արդիւնքներ չեն արձանագրած այստեղ»:

Հինգերորդ հանգրուանին Սարգիսեան տեղի տուաւ հարաւային ափրիկեցի վերերան թենիսմէն Ուէյն Ֆերերայի դիմաց: